ԹԱՄԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵՋ

Ինչպես հայտնի է հիմնախնդրի լուծումը հնարավոր է դառնում, երբ այն դիտարկվում է ավելի լայն համատեքստում, որոշակի մետահամակարգում (ապագայում): Այդ թույլ է տալիս միավորել ոչ միայն կարճաժամկետ, այլ համատեքստերի երկարաժամկետ տարբերակները: Առանց ապագայի գիտության (իմացության), առանց պարբերաբար ռազմավարական մտածողության տիրապետման արդեն անհնար է ադեկվատ գործառել ժամանակակից աշխարհում: Ռազմավարությունը կառուցում է ապագան, այդպիսով իրականացնելով դեպի այն օպտիմալ անցում[1]:

Ռազմավարության տակ հասկացվում է պետության ներսում և համաշխարհային մասշտաբով գործունեության տարբեր ոլորտներում (տնտեսական, քաղաքական, աշխարհայացքային և այլն) ճգնաժամային իրավիճակների կանխատեսում և կառավարում:

Ռազմավարությունը սերտ կապվում է կառավարման գործունեությանը, քանզի երկրին (կազմակերպությանը) ուղղորդում է իր ռազմավարական նպատակին: Այն, որպես կառավարման բարձրագույն մակարդակ, կարող է փոխհատուցել ռեսուրսների կամ այլ կարիքների պակասը, քանզի ավելի օպտիմալ ձևով է բաշխում ունեցած հնարավորությունները:

Պետական ռազմավարությանն են վերաբերում. պետության նպատակները, նրա գործունեության հիմնական տեսակները, «գլխավոր հարվածի» ուղղությունը, կողմնակիցների և հակառակորդների որոշումները, սեփական առավելությունները և դրանց օգտագործման ուղղությունները, գործունեության սկզբունքների համալիրը, հարաբերությունները արտաքին և ներքին միջավայրերի հետ[2]:

Ռազմավարությունն ավելի շատ ուղղորդվում է արտաքին միջավայրին, անկանխատեսելի պատահարներին արձագանքմանը, քան ներքին հիմնախնդիրներին: Ռազմավարական գործողությունների պլանի կառույցը պարունակում է.

- ռազմավարական տեսլականը և առաքելությունը,
- ռազմավարական նպատակները (կարճաժամկետ և երկարաժամկետ),

---

[1] Г. Почепцов, Стратедическиѧ анализ, Киев – 2004, с. 6, 332 с.

[2] Гапоненко А. Л., Панкрухин А. П., Стратегическое управление, М. 2004, св. 10, 472 с.

- ընդհանուր գործարար ռազմավարությունը,
- ոլորտին օժանդակող ֆունկցիոնալ ռազմավարությունը,
- անմիջական և հեռանկարային երաշխավորող գործողությունները:

Ռազմավարության մշակման արդյունավետ գործընթացը պահանջում է ռազմավարական հիմնախնդիրների հստակ գիտակցում, գլխավոր որոշումների ստեղծման տրամաբանական պարբերաբար մոտեցում ռազմավարական կառավարում, որն ունի երեք փուլ.

- ռազմավարական պլանավորում. առաքելության ու նպատակների մշակում, վերլուծություն ու ռազմավարության մշակում,
- ռազմավարական իրականացում. կազմկառույցներ, ինֆորմացիոն համակարգ, մշակույթ, կապեր,
- ռազմավարական հսկողություն. հսկողության չափանիշներ ու ցուցանիշներ, մոնիտորինգ, վերլուծություն:

Երկրի (կազմակերպության) կատարյալությունը կատարյալ ռազմավարության կատարյալ իրականացումն է: Նպատակները պետք է ունենան կառավարչական արժեք, պլանային ցուցանիշները լինեն բարձր, սակայն հասանելի, ղեկավարի, լիդերի անձնային ամբիցիաները, կառավարման փիլիսոփայությունը և էթիկական հայացքները պետք է ներհյուսված լինեն ռազմավարությունում, միջավայրերի վերլուծությունը պետք է արվի միշտ, այլ ոչ թե երբ փոփոխություններն արդեն անշրջելի են, վերլուծության խնդիրներից կարևորն է միջավայրերի փոփոխությունների մեգամիտումների վեր հանումը, մրցակիցների ռազմավարությունների վերլուծությունը, նրանց դիրքերի պարբերաբար վերլուծությունը, մրցակիցների ուժեղ կողմերին դիմագրավելու ասիմետրիկ մոտեցումների մշակում և մրցակցային առավելությունը պահպանելու նպատակով պաշտպանական ռազմավարության օգտագործումը:

Ռազմավարությունը սկսում է փոխարինել այն ռեսուրսներին, որոնք տվյալ պահին անհրաժեշտ են, փոխհատուցելով ուրիշներով բացակայող տարրերին: Այն ուղղված է առաջնայնությունների որոշմանը, քանի որ ռեսուրսային օժանդակությունը հնարավոր է միայն սահմանափակ ծավալով: Ընտրված առաջնայնությունների հավաքածուն պետք է ապահովի առաջխաղացում դեպի ընտրված նպատակը, հնարավոր է իր ետևից տանելով այլ սեգմենտների: Ռազմավարությունն իմաստ չունի, եթե կազմակերպությունը կամ երկիրը չունի առաքելություն, այսինքն որոշակի մետանպատակ: Առաքելությունն իրականացվում է ապագայի որոշակի տեսլականի շրջանակներում: Այդ պլանով ռազմավարությունն իրենից ներկայացնում է շարժում մետամակարդակով, երբ ուշադրություն է դարձվում ոչ միայն ռեալ, այլև պոտենցիալ գործողություններին, ինչպես իր, այնպես էլ հակառակորդներինը:

Այն, ի տարբերություն մարտավարության, միաժամանակ հակառակորդի կառավարում էլ է: Հայտնի մաքսիմը ասում է, որ եթե դու չունես ռազմավարություն, ապա կապրես ուրիշինով: Այդ կապված է այն բանի հետ, որ օտարի ռազմավարությունը միևնույն է գոյություն ունի, քանի որ երկիրը զարգանում է ոչ առանց դիմադրության հանդիպելու:

Ռազմավարությունը որոշում է ռիսկերը, քանզի կառուցվում է սկզբունքորեն ագրեսիվ միջավայրի համար: Այն հանդիսանում է գոյություն ունեցող ուժերի բազմապատկիչը, որովհետև ներկայացնում է նրանց համար ամենից բարեհաջող կիրառման ուղին: Այն թույլ է տալիս տեսնել ոչ միայն նպատակը, այլև դրան հասնելու խելամիտ ուղին: Այդ պլանում ռազմավարությունն առավել համակարգային է, քանզի ընդլայնում է «աշխատող» գործոնների հավաքածուն, անցում կատարելով պարադիգմայի, որը մինչ այդ ոչ ոք չի կիրառել:

Ռազմավարությունը անհայտի հետ աշխատելու մեթոդաբանություն է: Իրադրության ցանկացած վերլուծություն, պլանների ցանկացած կառուցում միշտ գիտակցված, թե ոչ, ներառում է իր մեջ որոշակի «սև արկղ», որտեղ ընկնում են իրադրություններ, որոնց չենք կարող կանխատեսել այդ պահին: Ցանկացած զարգացում պլանավորվում է ապագա օբյեկտների վարքի նախագուշակվող պայմաններում, իսկ նախագուշակվող վարքը միշտ կլինի տարբեր իրականից: Ավելին, միշտ կան չհաշվառված գործոններ, որոնք որոշակի պահի կարող են ներգրավվել, հանգեցնելով համակարգին անսպասելի գործողությունների:

Անհայտը (անորոշությունը) հանդիսանում է ռազմավարության գլխավոր օբյեկտը:

Անորոշության տարբերակներից մեկը, որին որ հարկավոր է պատրաստվել, քաոսին անցումն է՝ մի իրադրություն, որտեղ բացակայում է երկարաժամկետ նախագուշակումը: Այդ կապված է այն բանի հետ, որ ոչ գծային համակարգի վարքն արդեն չի կարելի հասկանալ նրան կազմող տարրերի վարքի հատկանիշներով: Սակայն պետք է նշել, որ անորոշությունը միևնույն կարգի տարր է, միայն այլ տիպի: Այն պահանջում է իր կառավարման համար այլ մակարդակի գործիքակազմ, որը սկզբունքորեն հնարավոր է: Քաոսը անհայտն է, սակայն այն կողմի համար, որը նրան այդպես է մեկնաբանում: Քաոսը, որպես կարգ, անորոշության գերակայումով, պահանջում է հատուկ տիպի ռազմավարություն: Քաոսի հաղթահարումը կառուցվում է ճգնաժամային ոլորտներում կարգի հաջորդական ետ նվաճումներով:

Ռազմավարությունը գործառում է մետամակարդակում, որի շրջանակներում կարող են փոխվել մեր պատկերացումները ստորին մակարդակի

օբյեկտների վերաբերյալ: Դրա շնորհիվ կարող են փոխվել նպատակներին հասնելու ուղիները, քանի որ մետամակարդակը հենց համապատասխանում է նպատակների ձևավորմանը: Ռազմավարությունը միշտ բախվում է ոչ ունիվերսալ օբյեկտների և գործողությունների: Ռազմավարական վերլուծության ուժը կայանում է նրանում, որ հնարավոր է լինում ճանաչել ոչ միայն նորը, այլև այն նորը, որը սկզբունքորեն տարբեր է քաղաքագետի ռազմավարական մշակույթում ընդունվածից:

Ռազմավարությունը նաև ուրիշների կողմից թելադրված առաջնայնություններից պաշտպանվելու միջոց է: Երկրները, կազմակերպությունները շատ հաճախ ձևավորվում և զարգանում են ոչ թե իրենց առաջնայնությունների ազդեցությամբ, այլ ուրիշների: Քանի որ ռազմավարության մեջ է մտնում նաև ուրիշների կառավարումը, ապա ոչ պակաս նշանակալի տարր է սեփական առաջնայնությունների պաշտպանությունն այլոց առաջնայնությունների միջամտություններից:

Գլոբալացումը նման միջամտությունների համար բացում է սահմանները, վիրտուալացումը ստեղծում է աշխարհի ընդհանուր պատկեր, որը հեշտացնում է նման միջամտություններին: Արդյունքում կարող են թելադրվել կեղծ նպատակներ, ոչ ճիշտ տեսներ ու շատ այլ բաներ: Չի կարելի ասել, որ դրանք սկզբունքորեն բացասական են, սակայն դրանք տվյալ երկրի համար առաջնային չեն և առաջնային են այդ առաջնայնությունն ունեցող դոնոր երկրի համար: Դոնոր երկիրը կարող է ընդունող երկրին մեխանիկորեն տալ աշխարհի իր տեսլականը (պատկերը), նույնիսկ չդնելով հատուկ նպատակներ: Այդ բնական իրադրություն է, օրինակ, ավելի զարգացած երկրների համար նվազ զարգացած երկրների նկատմամբ:

Ոչ ճիշտ ընտրված առաջնայնությունները, որպես հետևանք արտացոլվում են ռեսուրսների ոչ ճիշտ բաշխման վրա, որն իր հերթին երկրին տանում է փակուղի, քանի որ այն աշխատում իր իսկական հիմնախնդիրների համար և կողմնորոշվում է այլ երկրների առաջնային հիմնախնդիրների լուծմանը:

Սեփական զարգացման առաջնայնությունների որոշումը հատկապես կարևոր է քառսի շրջանում, երբ փոքր փոփոխությունները մեծ հետևանքներ են առաջացնում: Բացի այդ ոչ առաջնային պարամետրերի պահպանումը պահանջում է առանց այդ էլ սահմանափակ ռեսուրսների վատնում, որն իր հերթին թույլ չի տալիս ադեկվատ դուրս գալ ճգնաժամից, որը ստանում է պերմանենտ բնույթ: